

ԿՈՄՄՈՒՆԻՍՏ

(Շարունակութիւն*)

2. Հին քրիստոնէական Կոմունիզմի եութիւնը.

Ինչպէս Յունաստանի անկման ժամանակ, այնպէս էլ այժմ, հռոմէայեցի կայսրների ժամանակ այն ըստը մարդիկ, որոնք մտածում էին և կարեկցում տանջուող մերձաւորների համար, կարիք էին դրում այդ սարսափելի դրութիւնից դուրս գալու:

Այն հարցին, թէ ինչպէս պէտք է լինի այդ ելքը, շատ բազմադան պատասխաններ էին տրուում: Եւ Պլատոնի դադափարական պետութիւնը կրկին նորից արժարժուեց, բայց նա այժմ աւելի քիչ ազդեցութիւն կարող էր ունենալ, քան իւր երևան գալու ժամանակ. ճշմարիտ է, նոր Պլատոնական Պլատինը (3 դարում) այն աստիճանի գրաւեց բարձր դասակարգերի հաճութիւնը, մինչև անգամ Պալլիէն կայսեր և Սալուլինա կայսրուհու, որ կարող էր երազել մի քաղաք կառուցանելու նոցա օգնութեամբ Պլատոնական պետութեան ձևով: Սակայն ժամանակակից նորածն փրկիսոփայի այդ սալոնական հաւասարութիւնը այն բազմաթիւ խաղալիքներից մէկն էր, որոնցով բարձր կարգի անգործ մարդիկ ժամանակ էին սպանում: Մինչև անգամ փորձեր չեն արուած այդ ծրագիրը իրագործելու, եթէ այդպիսի մի փորձ չհամարենք ծրագրուած գաղութի համար դրած Platonopolis—Պլատոնաքաղաք անունը:

Պետութիւնը ամեն տեղ հանդիպում էր ընդհանուր անվստահութեան և անտարբերութեան. հասարակութեան կադմալուծումն այնքան բարձր աստիճանի հասաւ, որ ոչ մի մահկանացուից—թէպէտ լինէր նա կայսրներից ամենազօրեղը,—չէր կարելի սպասել, որ յաջողուէր նրան նոր կեանք ներշնչելու: Այդ կարող էր անել միայն մի գերամարդկային ոյժ, միայն հրաշքը:

Ով հնարաւոր չէր համարում, որ կարող էին հրաշքներ կատարուել, նա խորասուզուում էր դաժան յուճեցեցութեան մէջ կամ քնեցնում իրան անմիտ զուարճութիւններով: Բայց տանկվինիկ խառնուածքի տէր և յափշտակուող մարդկանց մէջ,

*) Տես Արարատ Թիւ ԺԱ.

որոնց համար անհնարին էր թէ մէկը և թէ միւսը, ոմանք ըսկսել էին հրաշքի հաւատալ: Այգպէս էին օրինակ ժողովրդի ստորին դասակարգի երեակայողները, որոնք հոգով չափ զգում էին հասարակական անկումը, որոնք ոչ միջոց ունէին զուարճութիւնների մէջ թմբելու, և ոչ ունէին այն հարեցողութեան հետեանքը, որ նման ճոխութիւններին յաջորդում է և յոռետեսութիւն առաջ բերում: Ահա նրանց շարքից, գլխաւորապէս դուրս է եկել այն գաղափարը, որ մերձակայ ժամանակ կյայտնուի Փրկիչը, և կհիմնէ երկրում մի երջանիկ թագաւորութիւն, որի մէջ չի լինիլ ոչ պատերազմ, ոչ աղքատութիւն, որի մէջ կթագաւորէ ուրախութիւն, խաղաղութիւն, առատութիւն և անսահման բաւականութիւն: Այգ Փրկիչն էր, Աստուծոյ Օծեալը—Քրիստոսը:

Երբ գործը միանգամայն այն ատիճանի էր հասել, որ սկսել էին հրաշքը հնարաւոր համարել, երեակայութեան բոլոր սահմանները վերացան, և ամեն ոք կարող էր երեակայել ապագայ պետութիւնը ամենագրաւիչ ձևերով: Կիոխուի ոչ միայն համայնքը—կիոփոխուի ամբողջ ընութիւնը, բոլոր վնասակարքաները կանյայտանան նրանից, ամեն տեսակ զուարճութիւն, որ նա տալիս է, չափազանց կշատանան մարդկանց ուրախութեան համար *):

Առաջին քրիստոնէական դերքը, որի մէջ աբտայայտուած են այդպիսի ակնկալութիւններ «Յովհաննու Յայտնութիւնն» է, գրուած, երևի, Ներոնի մահից քիչ յետոյ. այստեղ յայտնուած է, որ շուտով կռիւ կըորբորուի նորեկ Ներոնի—սուա Քրիստոսի և նորեկ Քրիստոսի մէջ,—մի կռիւ, որին կմասնակցէ ամբողջ ընութիւնը: Քրիստոս յաղթող դուրս կգայ այդ կռուից և կը հիմնէ հազարամեայ թագաւորութիւն, որի մէջ արգարները կթագաւորեն նրա հետ, և մահը իշխանութիւն չի ունենայ նրանց վրայ: Այդ բաւական չէ, այդ թագաւորութիւնը վերջանալուց յետոյ նոր երկինք և նոր երկիր կծագէ, և այդ երկրի վրայ նոր երուադէմ—երջանկութեան վայրը: Հազարամեայ թագաւորութիւնը—հին քրիստոնէութեան «ապագայ պետութիւնը» (zukunftsstaat), նորա անունից նոր համայնքի առաջ դալու երեակայական ակնկալութիւնները, որ ծագել են քրիստոնէութեան աղանդներում, կոչուում են «հազարամեայ»:

Յայտնութեան հետ միասին քրիստոնէութեան առաջին

*) Կոռոդին իւր «Խիլիադմի քննադատական պատմութեան» մէջ (Ֆրանկֆուրտ 1781 թ.) նկարագրել եւ մինչեւ անգամ քննադատորէն վերլուծել է երեակայութեան այդ տարօրինակ արգասիքը:

դարերի քրիստոնեայ ուսուցիչներից շատերը հաղարամեայ ակնկալութիւններ են յայտնել և երբեմն (ինչպէս Իրինիոսը Բ. դարում) և Նախաանցիոսը (320 թ.) մանրամասնօրէն նկարագրել են աշխարհիս դալիք դրախտը, ամենագրաւիչ զգայական ձևերով *):

Միայն այն պայմանների, որոնց մէջ քրիստոնէութիւնն էր գտնուում, փոխուելուց յետոյ, երբ նա դադարեց զժգաղճների և ճնշուածների, վարձկանների, ստրուկների և նոցա ընկերներին կրօն լինելուց, և դարձաւ նոյնպէս աշխարհի զօրեղների և հարուստների կրօն, այն ժամանակ հաղարամեակը եկեղեցու մէջ առանձին ընդունելութիւն չգտաւ, որովհետեւ նա, այնու ամենայնիւ յեղափոխական դոյն ունէր և գուշակութիւն էր դոյութիւն ունեցող համայնքի ապագայ յեղաշրջման:

Երանելի Օգոստինոսը, որ ապրում էր մօտ 430 թ. եռանդով կռուում էր այդ անյարմար վարդապետութեան դէմ՝ յայտնութեան մի ամբողջ շարք սոփեստիքական մեկնաբանութիւնների միջոցով: Այնուհետեւ հաղարամեակը դարձաւ հերետիկոսութիւն. պաշտօնական եկեղեցին երջանկութեան ապագայ պետութիւնը փոխադրեց ամպերի ետեւ: Հաղարամեայ ակնկալութիւնները հին քրիստոնէութեան հոգեւոր կեանքի ամենայայտնի երևոյթներից մէկն է ներկայացնում: Բայց որչափ ոխալուում է նա, ով կարծում է, որպէս թէ ներկայ սոցիալ-ուսմիւսմարութիւնը ոյժ է ստանում մի ինչ որ «ապագայ պետութեան» խոստումներից, այդպէս կսխալուէր և նա, ով մըտած էր, որպէս թէ հին քրիստոնէութիւնը իւր ոյժի ամենաէական մասը հաղարամեակից է վերցրել: Սոցիալ-ուսմիւսմարութեան նման նաեւ հին քրիստոնէութիւնը անընկճելի դարձաւ իշխանաւորների համար նրանով, որ նա անհրաժեշտ էր ազգաբնակութեան մեծամասնութեան համար: Ոչ թէ վերջնիւ բարելից ցնորքներն են նրան յաղթանակ շնորհել, այլ նրա սրակտիքական գործունէութիւնը:

Հասարակական չքաւորութիւնը (pauperism) ինչպէս տեսանք կայսրների ժամանակ մի խոշոր սոցիալական հարց էր: Պետութեան կողմից նրա դէմ կռուելու բոլոր ջանքերն ապարդիւն անցան: Կայսրներից ոմանք, ինչպէս և մասնաւոր անձինք, փորձում էին դիմագրել նրան բարեգործական հաստատութիւններին միջոցով. բայց այդ կատարուում էր չափազանց սահմա-

*) Ապագայ քրիստոնեայ թագաւորութեան մէջ մեծ դեր են խաղացել սէրը և զինին:

նախակ շարիերով, դրանք շեկացած քարի վրայ ընկած կաթիլներ էին: Իսկ հռովմէական ոգոս ընդունարանն այդ հաստատութիւնների համար օրինակելի կառավարիչ չէր:

Յոռեառնները և կենսառէրները համայնական չքաւորութեան դէմ նոյնն էին անում, ինչ որ պետական և հասարակական այլ թերութիւնների դէմ, այն է, ոչինչ լսեալէր: Նրանք այդպէս էին դատում. — Եւրոպէ, շատ ցաւալի է, որ այդպիսի կարգեր են տիրապետում, քայքայեալ անխուսափելի է, և ինչիստիւնների ըմբռնելու հաշիւ մղել այդ անխուսափելիութեան դէմ: Սանկիինիկ խառնուածքի տէր և յափշտակուող մարդիկ, որոնց վրայ ծանրանում էր անկանոնութեան ամբողջ բեռը, ուրիշ կերպ էին մտածում: Նրանք չէին կարող խաղաղ վերաբերուել դէպի այն. նրանք պէտք է ձգտէին նրան վերջ դնելու: Նոյն խառնուածքի ներկայացուցիչների կողմից եղան եռանդուն փորձեր գոյութիւն ունեցող թշուառութեանց դէմ կոռուելու:

Այդ ջանքերը պէտք է ուրիշ բնաւորութիւն ունենային, քան գրաքեանների ջանքերը: Գրաքեանները դիմում էին պետութեան. նրանք կամենում էին, որ բանուոր դատակարար իւր ձեռք ձգէ քաղաքական իշխանութիւնը և յատուէ նրանից իւր շահերի համար: Այժմ անյայտացու ամեն մի քաղաքական շարժում, և ամենքը կասկածանքով էին վերաբերուում դէպի պետութեան իշխանութիւնը: Այդ նոր ընկերավարականները ոչ թէ պետութեան միջոցով, այլ նրա յետեւ, միանգամայն նրա հետ կապ չունեցող կազմակերպութիւնների միջոցով էին կամենում հասարակութիւնը վերանորոգել:

Աւելի նշանաւոր էր միւս տարբերութիւնը: Գրաքեանների շարժումը կիսա-գիւղական էր. նա ասպատանել էր ոչ միայն քաղաքացի բանուորներին, այլ և աղքատացած գիւղացիներին: Եւ խնդիրն այն է, որ քաղաքացի բանուորը այն ժամանակ մի ոտով դեռ գիւղացի էր, և քաղաքացի բանուորին նա կամենում էր գիւղացի դարձնել: Կայսրների ժամանակ քաղաքը և գիւղն արդէն բոլորովին անջատուած էին: Քաղաքական և գիւղական բնակչութիւնները կողմուած են երկու ազգեր, որոնք այլ ևս միմեանց չեն հասկանում: Գրիստոնէական շարժումը սկզբում մեծ քաղաքների շարժում էր, և այդ այն ատոմիսանի, որ գիւղացի և հեթանոս հատկացողութիւնները նոյնանիչ էին *):

Գրա հետ է սերտ կապուած գրաքեան և քրիստոնէական սոցիալական վերանորոգութեան տարբերութիւնը: Առաջին

*) paganus (լատ. գիւղացի) յետագայ բրիտոնական երբ զործ են անել «կուսակաշտների համար»:

շարժումը կամենում էր, որ գիւղացիական տնտեսութեան տեղի տայ ընդարձակ հողատիրութիւնը (ЛАЗИФУНТІЯ): Եթէ նա յաւակնութիւն ունէր ժամանակակից սեպհականութիւնը բաժանել, միայն նրա համար՝ որպէսզի արդիւնաբերութեան եղանակի վերանորոգութեան ճանապարհ հարթէր: Բայց հէնց զրա համար էլ նա, ինչպէս տեսանք, պէտք է մասնաւոր սեպհականութիւն ճանաչէր (արդիւնաբերութեան միջոցներով): Քրիստոնէութեան նախկին շրջանում վճռական դեր էր խաղում քաղաքացի քրջագետ բանւորների խումբը, որը ծուլութիւն էր սովորել: Արդիւնաբերութիւնը այդ տարրերի համար բաւականին անտարբեր բան էր. նոցա համար օրինակ էին ծառայում դաշտի շուշանները, որոնք չեն ցանում, չեն մանում, և այնուամենայնիւ ծաղկում են բողբոջում: Եթէ նրանք ձգտում էին սեպհականութեան այլ տեսակ կարգաւորման, ոչ թէ արդիւնաբերութիւնն ի նկատի ունէին, այլ սպառողական միջոցները: Բայց սպառողական հասարակութիւնը այն ժամանակուայ քրջագետսաների համար մի չլսուած բան չէր:

Զբաւոր ժողովրդի նշանաւոր մասերի պարբերական կերակրելը կամ նրանց կենսական միջերջներ բաշխելը սովորական էին հասարակապետութեան վերջին ժամանակ և գոյութիւն ունէին նաև կայսրութեան շրջանի սկզբներում:

Բայց աւելի ընտանի ի՞նչ կար, քան ձգտել, որ այդ բաշխումները և սնուցումները դառնան սիստեմատիքական—փոխուեն գոյութիւն ունեցող սպառողական միջոցների կանոնաւոր հաւասարութեան, մասամբ հաւասարաչափ բաժանելով, մասամբ էլ հաւասարաչափ օգտուելով: Մնուեղ առան այդ տեսակ հաւասարութեան դադարաւորներ և շուտով նոցա յաջորդեցին կոմմունական համայնքներ: Առաջին այդպիսի համայնքները երևան եկան արևելքում, որ տնտեսական դժուրութեամբ աւելի էր առաջ գնացել,—հրէաների մէջ. այստեղ դեռ Քրիստոսից առաջ յայտնութեան ակնկալութիւններ էին երևան եկել, որտեղ դեռ մէկ դար մեր շրջանից առաջ գտնում ենք կոմմունական գաղտնի համայնք, եսենականների կաղմակերպութիւնը:

«Հարստութիւնը նոքա բանի տեղ չեն դնում», պատմում է նոցա մասին Յովսէփոսը: «Բայց շատ բարձր են դասում նոքա գոյքի հաւասարութիւնը և նրանց մէջ չկար մէկը, որ աղքատ լինէր միւռից: Նրանք օրէնք ունին, որ նրանց համայնքի մէջ մտնել ցանկացողները պէտք է իրանց ունեցուածքը ընդհանուրի օգտին ներկայացնեն. զրա համար նկատելի չէ նոցա մէջ ոչ պակասութիւն, ոչ աւելորդութիւն, բայց ամեն բան ընդհա-

նուր է նրանց համար, իբրև հղբայրների ... նրանք միասին չեն ապրում մի քաղաքում, այլ բոլոր քաղաքներում ունեն իրանց առանձին տները, և եթէ ուրիշ տեղից նոցա համայնքին պատկանող մարդիկ են գալիս, իրանց ձեռքերից բաժին են հանում նոցա, և նոքա կարող են օգտուել նրանով ինչպէս իրանց սեպհականութեամբ: Նրանք առանց քաշուելու գալիս են իրանց հղբայրակիցների մօտ, թէպէտ առաջ երբէք էլ իրար տեսած չլինին, և այնպէս են պահում իրանց, որպէս թէ իրանց ուրիշ կեանքում մօտիկ ծանօթ են եղել: Ճանապարհորդութեան դուրս գալով նրանք ոչինչ չեն լվերցնում բացի հրացանից՝ աւազակներից պաշտպանուելու համար: Իւրաքանչիւր քաղաքում նոքա առանձին մարդ ունին, որ զգեստ և կենսական միջոցներ է բաժանում օտարութիւնից եկածներին ... Նրանք միմեանց հետ վաճառականութիւն չեն անում, և եթէ մէկն ու մէկը մի բան է տալիս կարիք ունեցողին, իւր կողմից էլ նրանից առնում է, ինչ որ իրան պէտք է: Եւ եթէ կարիք ունեցողը ոչինչ չի կարող տալ, այնուամենայնիւ կարող է վերցնել ամեն բան ինչ որ հարկաւոր էր ումնից ցանկանար *):

Բոլորովին այդ ձևով էլ կազմակերպուեցան նա'ւ քրիստոնէական առաջին համայնքները: Արդեօք այստեղ զիտութեան հետեւողութիւն կար, և եթէ կար, ինչ չափով, պարզուած չէ:

Այդ համայնքների մէջ եղած նմանութիւնը կարող էր յառաջանալ այն հանգամանքների նմանութիւնից, որոնցից նոքա ծագել են: Յամենայն դէպս քրիստոնէական համայնքները շուտով գերազանցեցին եառնականին մի էական կէտում, միջադպրոցութեամբ, որ հռովմէական պետութեան միջադպրոցութեան էր համապատասխան: Եստեանականները խիստ հրէականութեան էին հետևում: Նրանք մ'նացին իբրև մի փոքր աղանդ, որը հազիւ թէ 4000 անգամից աւելի է ունեցել: Իսկ քրիստոնէութիւնը նուաճեց հռովմէական պետութիւնը:

Ակզբում քրիստոնէականները յաճախ ձգտում էին կատարեալ գոյքի հաւասարութիւն մտցնելու: Քրիստոս ասում է (Մատթ. ԺԹ. 21) հարուստ պատանուն. «Եթէ ուզում ես կատարեալ լինել, դնա՛ ծախիր քո գոյքերը և բաժանիր աղքատներին»: Գործք առաքելոցում երուսաղէմի առաջին համայնքը հետևեալ կերպով է նկարագրում. «... և ոչ ոք իւր ունեցուածքից մի բան իրանը չէր անուանում, այլ նոցա ամեն բան ընդհանուր էր ... նրանց մէջ ոչ մի կարիք ունեցող չկար, որովհետև ա-

*) Յովսէփոս Հրէից պատերազմի պատմութիւնը. Բ. գիրք. 8. 3. 4.

մենքը, որ տուն և հողեր ունէին, վաճառում էին և դինը ըն-
րում առաքեալների ոտքերի մօտ դնում, և ամեն մէկին տըր-
ուում էր ամեն բան, ինչի կարիք զգում էր» *): Անանիային և
Սափիրային, որ իրանց ունեցուածքի արժէքի մի մասը թաղցրել
էին, ինչպէս յայտնի է, Աստուած մահուան պատիժ տուեց **):

Սակայն կոմմունիզմի այդ անսակը դործնականօրէն տա-
նում էր դէպի այն, որ արդիւնաբերութեան բոլոր միջոցները
դառնում էին սպառողական միջոցներ, որոնք պէտք է բա-
ժանուէին ազգասիրելի, այդ սխաեմի հետևողական իրագոր-
ծումը տանում էր դէպի ամեն տեսակ արդիւնաբերութեան
դադարում: Ինչքան էլ առաջին քրիստոնեաները անտես ա-
նէին արդիւնաբերութիւնը, իրեւ իսկական մուրացիկ փիլիսո-
փաներ,—այդ հիման վրայ չէր կարելի հաստատուն և նշանա-
ւոր համայնք կազմակերպել:

Արդիւնաբերութեան այն ժամանակուայ դրութիւնը պա-
հանջում էր մասնաւոր սեպհականութիւն արդիւնաբերութեան
միջոցներով, և քրիստոնեաները չէին կարող դրա դէմ ոչինչ
անել ***): Այդ ձևով նրանք պէտք է ձգտեն կոմմունիզմի հետ
միացնելու մասնաւոր սեպհականութիւնը:

Մասնաւոր սեպհականութիւնը կոմմունիզմի հետ միացնելը
այնպէս է կատարուել որ ամեն մէկին մնացել է իւր սեպհա-
կանութիւնը,—այսինքն, արդիւնաբերութեան միջոցների վրայ,
բայց պահանջում է միայն սպառողական—կենսական միջոց-
ների կոմմունիզմ:

Հասկանալի է, այդ տարբերութիւնը աչքի չէր ընկնում
տեսութեան մէջ. այն ժամանակ տնտեսական հարցերում այն-
պիսի նրբութիւններ չէին վերլուծում: Բայց զբա հետ գործում
էր նաև փորձը, և միայն այդ տարբերութեան օգնութեամբ
կարելի է հասկանալ թուացող հակասութիւնը եկեղեցական
վարդապետութեան մէջ, և եկեղեցին առաջին դարերում միա-
ժամանակ թէ փառաբանում էր գոյքի ընդհանրութիւնը և թէ
դատաւիետում մասնաւոր սեպհականութեան ամեն մի ձգտում:

Ունեւորները պէտք է իրանց արդիւնաբերութեան միջոց-

*) Գործք. Գ. ԳԼ. 52—53.

**) Կարեւոր է նոյնպէս Բ. 44—45.

***) Վանքերը բացառիկ երեւոյթներ էին կազմում եւ վանական
կազմակերպութիւնը երբէք չէր կարող ընդհանուր համակարգութիւն դառ-
նալ. Բայց վանքերում էլ զխաւորը սպառողութեան ընդհանրութիւնն էր.
իսկ արդիւնաբերութիւնը երկրորդական խնդիր էր. Մենք կդառնանք սրան՝
ուրիշ հանգամանքների հետ կապելով.

ները պահէին և օգտուէին ամենից առաջ իրանց հողից. բայց սպառողութեան բոլոր միջոցները, որ ունէին կամ ձեռք են բերել—կերակրի միջոցներ, հագուստ, բնակարաններ, և այդ բաները գնելու փողը պէտք է քրիստոնէական համայնքի տրամադրութեան յանձնէին: «Այդ ձևով գոյքի ընդհանրութիւնը լոկ սպառողութեան ընդհանրութիւն էր: Ամեն մի քրիստոնեայ եղբայրական համաձայնութեամբ իրարու նք ունէր ամբողջ համայնքի՝ բոլոր անդամների գոյքի վրայ և կարող էր, կարիքը եղած դէպքում, պահանջել, որ ունեւոր անդամները իրանց կարողութիւնից այնքան տան իրան, ինչքան որ պէտք է կարիքին բաւարարութիւն տալու համար: Իւրաքանչիւր քրիստոնեայ կարող էր օգտուել իւր եղբայրակիցների գոյքից, և բոլոր քրիստոնեաները, որ սրեւէ բան ունէին, չէին կարող մերժել իրանց եղբայրներին՝ իրանց ստացուածքից օգտուելու:

Տուն չունեցող քրիստոնեան օրինակի համար կարող էր ուրիշ քրիստոնէից, որ երկու կամ տուէլ տուն ունի, պահանջել իւր համար բնակարան, բայց տան տէրը այնուամենայնիւ չէր զրկուում իւր սեպհականութիւնից: Սպառողութեան ընդհանրութեան պատճառով ուրիշին էլ պէտք էր բնակարան տալ օգտուելու համար» *): Սպառողութեան շարժական միջոցները և փողերը հաւաքուում էին մի տեղ, և մի առանձին անձնաւորութիւն էր ընտրուում, որ այդ միջոցների բաշխումն էր ղեկավարում:

Առաջին քրիստոնեաների լիակատար կոմմունիզմը հանդէս եկաւ, ընդունելով՝ թէպէտ սահմանափակ չափով, մասնաւոր սեպհականութիւն: Նա գեռ էլի պէտք է թուլանար:

Սպառողութեան կոմմունիզմը, ինչպէս արդէն տեսել ենք Պլատոնական պետութիւնը հետազօտելիս, խիստ նեղ կերպով կոպուած է ընտանիքի և միակնութեան ոչնչացման հետ: Դրան կարելի էր հասնել երկու ճանապարհով. կանանց և որդւոց ընդհանրութեան միջոցով կամ սեռական յարաբերութիւններից հրաժարուելով—ամուրիութեամբ:

Պլատոնը առաջին ճանապարհն ընտրեց. ետեւնականները՝ երկրորդ: չէնց սկզբում քրիստոնէութիւնն էլ փորձեց ընտանիքի և ամուսնութեան դէմ դուրս գալ,—գլխաւորապէս անապատական ձևով, որ ամենից շատ էր համապատասխանում Ժամանակի հիասթափուած տրամադրութեան. բայց կային նոյն-

*) L. Z. Hegel. Alterthümer der ersten und ältesten christen Hamburg. 1780. էջ 47:

պէս քրիստոնէական աղանդներ, — օր., աղամեաններ, երկրորդ դարու գնոստիկեաններ, — որոնք քարոզում և փորձով կատարում էին ընտանիքի և ամուսնութեան ոչնչացման աւելի ուրախ ձևը:

Մատթէոսի աւետարանում Քրիստոս ասում է (ԺԹ. 29). «.... ամենայն, որ թողցէ զատունս, կամ զեղբարս, կամ զքոյրս, կամ զհայր, կամ զմայր, կամ զկին, կամ զորդիս, կամ զերկիր վասն անուան իմոյ, ընկալցի հարելըս պատիկ, և զկեանս յաւիտենական ժառանգեացէ»: Առկառու աւետարանում Քրիստոս ասում է (ԺԳ. 26). «Եթէ ոք դայ առ իս, և ոչ տեսայ զհայր իւր և զմայր և զկին և զորդիս, և զեղբարս և զքոյրս, առ այս և զկեանս իւր, ոչ կարէ լինել աշակերտ ինձ» *): Բոլոր հին քրիստոնեայ համայնքներին յատուկ էր առնուազն որոշ չափով ընտանեկան կեանքն թուլացնելու ձգտումը: Դրա համար տեսնում ենք նրանց մօտ ամենօրեայ ընդհանուր սեղաններ (Հմմ. Գործ. Բ. 46): Այդ սիրոյ ճաշերը — աղապները համապատասխանում են սպարտացւոց և պլատոնական պետութեան ընդհանուր ճաշերին՝ սեռիտիաներին: Նրանք սպառողական կոմմունիզմի բնական հետևանքն էին:

Սակայն, ինչպէս ասացինք, քրիստոնէութիւնը չկարողացաւ սարքել մանր արդիւնաբերութիւն և մասնաւոր սեպհականութիւն՝ արդիւնաբերութեան գործիքներով:

Բայց դրանց հետ անքակտելի կերպով կապուած է ընտանիքը, ոչ միայն իբրեւ մարդու և կնոջ, ծնողաց և որդւոց կենսակցութեան ձևը, այլ և իբրեւ տնտեսական միութիւն: Որովհետև քրիստոնէութիւնը չկարողացաւ արդիւնաբերութեան նոր ձև ստեղծել, նա պէտք է թողնէր նաև ընտանիքի աւանդական ձևը, — ինչքան էլ չհակասէր այդ ձևը սպառողական կոմմունիզմին: Ոչ թէ օգտուելու, այլ արդիւնաբերութեան միջոցն է որոշում վերջին աստիճանի վրայ համայնքի բնաւորութիւնը: Ընտանիքի և ամուսնութեան ոչնչացումը, որին ձգտում էին, ինչպէս նաև լիակատար կոմմունիզմը, — անհատելի էր համայնքի մէջ քրիստոնէութիւն տարածելուն: Նա միշտ սահմանափակուում էր առանձին աղանդներով և խմորակցութիւններով, և երբէք ընդհանուր բնաւորութիւն չստացաւ:

Թարգ. Ի. Ս.

(Շարու հակելի):

*) Տես նոյնպէս Մատթ. Ժ. 57. ԺԲ. 46—50. Մարկ. Գ. 54—55. Ժ. 29—50. Առկ. Բ. 20—21. ԺԸ. 29—50.